107. ԹԱՔԱՎԸԵՐՆ ՈՒ ԴԱՎՐԻՇԸ

Շատ հին վախտին մի թաքավրեր ա ըլել։ Օրերի մի օր մի դավրիշ էտ թաքավրերին պտահըմ ա, թաքավրերը ասըմ ա. «Ի՞նչ ես ուզըմ, ընչի՞ ես ման կյալիս։ Ասըմ ա. «Եկել եմ մանամ, տրեանամ վրե՞նց ես ապրըմ»։ Ասըմ ա. «Ապրիլը հեչ, լավ եմ ապրըմ, համա ժառանգ չի ունեմ, էտ ցավը ինձ շատ ա տանջըմ»։

Դավրիշը ասըմ ա. «Էտ հե՞չ, տա հեշտ պան ա, ես քեզ մի խնձոր կտամ, կեսը տու կուտես, կեսը՝ քու կնիկը։ Կընիկտ երկու տղա կըպիրի, մինը ինձ կտաս, մինը՝ քեզ, համա բեխանց անըմնին տընեք վրեչ, մըչևը իմ կյալը»։

Դավրիշը խնձորը տալըիս ա թաքավրերին ու բրախըմ ա բըյնըմ, թաքավրերը պիրըմ ա տուն կընգյա հետ մսըլհաթ էն անըմ ու խնձորը իրար հետ ուտըմ են։ Կյալիս ա իրան վագեն թմամըմ ա թե չէ, էս թաքավրերի կընիկը էրկու տըղա ա պիրըմ, բեխեքը տառնըմ են տասնըհինգ-տասնըվեց տըրեկան, համա դե դավրիշը հըլա կա վրեչ։

Մի օր էլ թաքավրերը ասըմ ա. «Ա՛ կընիկ, դավրիշը եկավ վրեչ, պի էս բեխանցը անմնրի տնենք, մըչևը նրա կյալը»։

Մընի անմը տընմ են Ղազար, մընինը՝ Նազար։ Անց ա կենըմ մի քանրի վախտ, օրերի մի օր դավրիշը կյալիս ա տրենըմ ա բեխեքը ըտի հաղ են անըմ, սա կըլխի ա ընգյնըմ, վրեր էս էն բեխեքն են։

Ասըմ ա. «Ծրեր հերը վրե՞րդի ա»։ Ասըմ են. «Տանն ա»։

— Կանչեցեք տուս կյա։

Քյնըմ են հորը ասըմ. «Կանչող կա»։ Թաքավրերը վրեր կյա-լիս ա տրենըմ ա էն դավրիշն ա, թուքը կուլ չի քյնըմ։ Ասըմ ա. «Դե՛, արի տուն էլի, խի՞ ես ըտի վաղնելը»։ Ասըմ ա. «Չէ՛, իմ փայը տո՛ւ, ես քյնըմ եմ»։

Կանչըմ ա տուն տրան ինչքամ վրեսկի, հարստութին, լավ-լավ պաներ ա խոստանըմ, դավրիշը հոժար չի ըլըմ։ Թաքավրերը տրենըմ ա, վրեր ճար չիկա, ըրեխանցը կանչըմ ա մանրամասը պատմըմ ա, ասըմ ա. «Ա բալըրենի շան, սրհե-սրհե պայման ենք տըրել էս մարթըի հետ. հըմի ծըրեղանըից վրե՞րա կըքյնաք տը-րա հետ»։

Ըրեխենքը վաղնըմ են մըտածըմ, մըտածըմ, մըհել մեծ ախ-պըրերը ասըմ ա. «Հայրիկ շա՛ն, դե վրեր տըհե պայման ես կա-պըրել, ես կըքյնամ»։

Մեծ ախպըրերը պուճուրին կանչըմ ա ասըմ ա. «Թուրս կըշ-տիա հիլ եմ անըմ, տասը օրը մըհետ կըհանես, մըտիկ կանես, եթե թամուզ ըլի՝ ուրեմն տըեղս լավ ա, եթե ժանգոտած ըլի՝ տըեղս շատ նեղ ա, կըհասնես օքնութենի»։

Դավրիշը էս տըղին վրեր ա ունըմ՝ ճամփա ընգյնըմ, կյա-լիս են մի պառավի տուն, ղոնաղ են ըլըմ։ Վրեր հաց են ուտըմ, պրծնըմ, դավրիշը քնըմ ա, պառավն ու էս տըղեն ղրից են անըմ, վրեր տըղին հրցնըմ ա. «Վրեր՞դիան եք կյալի, ո՞ւր եք քյնըմ»։

Տըղեն պատմըմ ա, ասըմ ա. «Սրհե-սրհե, իմ հոր հետ պայ-ման են կապրել, հմի ես քյնըմ եմ»։ Էս պառավը իմաստուն ա ըլըմ, կըլխի ա ըլմ դավրիշի մըիտկը։ Տըղին ասըմ ա. «Բալա՛ ջան, քեզ կըտանրի, վրեր կասի. «Էս արա՛, էն արա՛» ասա. «Դավրիշ ջան, բա ես թաքավրերի տըղա, էդ ղայդի պանեը շա՞տ եմ արել, վրեր գյըդենամ. տու՛ արա, վրեր տրենամ սըվրերեմ, նոր ես էլ անըեմ»։ Էնքան տըհե առաչ իրան անըիլ կտաս, մըշեր հերթը կյա հաց թըխիլու օրը։ Հաց թըխիլու օրը քեզ կասի. «Արի՛, հաց թխի»։ Տու ըլետ կասըես, վրեր. «Արի էս մըհետը տու թըխի, նոր էն մըհետը ես կըթխեմ»։ Հըլե ինքը նստի թոնըրի ղրաղին՝ հաց թխի թը չէ՝ տու՝ քամակիցը քոինչ կտաս, կըքցես թորենը ու տրանից կազատվես։

Ըռավըետը տըհանք վրեր են կենըմ կյալի դավրիշի տուն։ Էս դավրիշը տրան սկսըմ ա պընցնիլը. «Է՛ս արա, է՛ն արա»։ Տը-ղեն էլ արթեն վրենց պառավը ասել ա, նըհենց էլ անըմ ա։ Օրե-րի մի օր էլ հաց թըխիլիս էս տըղեն էտ դավրիշին քոինչ ա տա-լըի, քցըմ ա թորնըի մեչը։ Էս դավրիշը էրվըմ ա։

Տղեն ինչքան ման ա կյալի, տրա օթախների պըլանիքներն քթնըմ չի, վերչը մըհել վրենց ա ըլըմ էքսի օրը ասըմ ա. «Բա-սրա ջըրըմն ա ըլել, հետը քցել եմ թորենը»։ Փետը վրեր ա ունըմ խառնըմ, թորնի միչիցը մի տասը տասներկու պլանիքնի ա հանըմ, սկսըմ ա տրոները մին-մին պաց տնըիլը ու ակ տալը։ Էլ ինչը ասրես, վրեր ըլըմ չի տրա տանը։ Հասնըմ ա ամրենա-վերչի օթախին, վրեր էն էլ պաց ա անըմ, մընըմ ա ըրմացած, տրենըմ ա էն ղայդի էրկու լավ ծիյան, վրեր էլ ասիլու չի. վրե՛չ ուտրես, վրե՛չ խմրես, սրանց շենքին ու շնորքին մըտրիկ անրես։ Էրկուսն էլ մին մընից լավը, էրկուսն էլ իրանց սարքով, կար-քով ու էրկուսի վրա էլ էն ղայդի շորեր կա ծալած, թամքիցը կա-պած, վրեը մարթ ղիմիշ չի անըմ ծրեռը տա։ Սա մոտանըմ ա էն մընի վրի շորերը ետ ա անըմ, հաքնըմ, ղենքերը կապըմ, ծին տուս պիրըմ նստըմ ու քշըմ։ Սա շատ ա քյնըմ, թե՝ քիչ, աստած ա դյիդըմ, մըհել տրենըմ ա մի քոլըի միչի մի էն ղայդի կյուտց ա կյալի, վրեր էտ սաղ քոլերը դըմբղըմբըմ ա։ Կամաց մոտանըմ ա, տրե-նըմ ա մի վաղրը՝ վրետը ուռած, ժահրըկալած ըտի վեր ընգյած, կյոռըմ ա։ Էտ տրղեն ծիյուցը վեր ա կյալի, թրի տրտնովը վրեր էտ ուռած տրեղին բզի ա տալըի, ծրեռաց պրտառըմ ա ու ժահ-ըը բրթալա տուս ա քցըմ, վագրը դինջանըմ ա։ Ասըմ ա. «Ա՛յ տրղա, էս օխտը տարի ա, ես իմ վրետի ցավըիցը տանջվի, մինը կարեը վրեչ մի դարման անրի, տու ըսօր ինձ էս ցավըիցը ազա-տեցիր, իմ մի ճուտը քեզ փեշքեշ եմ անըմ»։

Սա էս ճուտը վրեր ա ունըմ ու քյնըմ ա։ Խելախ քյնալուց եղը, մըհել տրենըմ ա մի քոլըմ մի ծառի լալակի Զմրութ ղու-շը պուն ա շինել. օցը ծառնըդիյերըմ ա, էն ա հա՛ պընին ա հասնըմ, վրեր ճուտերին ուտի։ Էս տրղեն վրեր տրենըմ ա հա՛՝ ծիյու միչկին կաղնըմ ա, թուրը ծեռին քշըմ կյալի, ծառրի տակիցը վրեը ծեփըմ ա օցի կիսին, օցը էրկու կես ա ըլըմ ու վեր ընգնըմ։ Օցին կտոր-կտոր ա անըմ ըտի սաքյըմ ու ինքը էն ղոլեն պրանվըմ ու քնըմ ա։ Ղուշը կյալիս ա հեռվիցը տրղին արենըմ ա թը չէ՝ գյիդըմ ա, թե ճուտեր ուտողը նա յա. վրա ա քշըմ վրեր քրքրի, ճուտերը հիլ չեն անըմ, ասըմ են. «Մրեզ թափողը տա էր, տա չէր ըլել, հիմի օցը մրեզ վազեց էր կերել»։ Ղուշը թևերը պահըմ ա տրա վրա՝ շվաք ա անըմ, մըչևը տրղեն վրեր ա կենըմ։ Վրեր տրղեն վրեր ա կենըմ, ղուշը ասըմ ա. «Տրղա՛, էս օխտը տարի ա ես էս ծառի վրա պուն եմ շինել, համա օխ-տը տարվա միչին մըհետ էլա ճուտրի իրես չեմ տրեհել, վրեր տու

էս անքամ իմ ճուտերին թափեցիր, առ էս մի ճուտը քեզ փեշքեշ»։

Տղեն էտ երկու ճուտը վրեր ա ունում ու քյնում, քյնում ա մի խոր քոլում մի ըխպրի կշտին նստում, ինքը հաց ա ուտում, ծին էլ ըրածում ա։ Մըհել ծիյուն պիրում ա էտ ըխպրիցը ճուր ա տալը. սա մըտիկ ա անում, տըենում ա ծիյու պռոշնին չիմ վըեսկաճրվել ա։ Կամաց ծիուցը վեր ա կյալի, ինքն էլ ա խմում, փրեսը լվանում, ծիուն էլ ա լըցնում ու էրկուսն էլ վըետից կյլոխ վըեսկաճրվում են ու ճամփա են ընգյնում, կյալիս են հասնում են մի ուրուշ թաքավրերի հող։ Ծիյուցը վեր ա կյալի, շորերը հանում ա, զենքերի հետ կապում ա ծիյու թամքիցը, ծիյուցը, ղշիցը, վագրիցը մի մագ սլուկում, իրենց դեն ա անում։ Ինքը կյալիս ա մի շորանրի կուշտը, տրանից մի վըեշխար առնում, մորթում, փորը լվանում, շորցնում, կըլխին տնում, տառնում ա իսկական քաչալ ու կյալիս ա էտ թաքավրերի ղազերը ըրցնում։

Օրերի մի օր թաքավրերի ըխչըկեքը վազիրին ասում են. «Մըեր հորը ասա մըչև ե՞փ դես մըեզ պահիլ, խի՞ չես մարթրի տալըիս»։

Վազիրը քյնում ա իրեք հատ եմիշ ա պիրում՝ մինը լակ, մինը՝ հասած, մինն էլ խակ ու տնում ա թաքավրերի ղաքին։ Թաքավրերը ասում ա. «Էս ի՞նչ պան ա». Ասում ա. «Էտ քու ըխչկեքն են, թաքավրերը ապրած կենա, ուզում են մարթրի քյնան, ի՞նչ եք ասում»։

Թաքավրերը կանչում ա իրեք ըխչկանն էլ ասում ա. «Դե՛, ասըեցեք տըենամ, ով ոմ ա ուզում»։ Մեծը մի մինիստրի անում ա տալըի, միչնակն էլ՝ մի, պուճուրն էլ ասում ա.— Ես էլ մըեր ղազարածրին եմ ուզում։ Թաքավրերը գյիդում ա, թե ախչիկը զարափաթ ա անում։ Ասում ա. «Դե՛, լավ, ա բալա ջան, հըմանչիլ մի, ասա տըենամ՝ տու ո՞մ ես ուզում»։ Ասում ա. «Արթեն ասըեցի, քանրի հետ դեմ ասըիլ»։ Թաքավրերը տըենում ա, վրեր չէ, ախչիկը զարափաթ չի անում, դեռ ա ասում, ասում ա. «Ա՛ բալա, տու շա՞ղ ես, գյի՞ժ ես, թե՞ ուզում ես ինձ խայտառակ անես, ես քեզ էն զայդի տղի տամ, վրեր տըենողի քյեփը կյա»։ Ախչիկը ասում ա. «Չէ՛, ինձ ուրուշը պետկը չի, իմը՝ նա՝ ա»։

Էլ ասըիլ մի, թե ախչիկը քաչալին թաքուն լըղանալիս տըեհել ա, թե նա՝ ինչ զայդի վրեսկա մազրեր ունի ու ինչ զայդի սուրուն ա։

Թաքավրերը տըենում ա, վրեր էլ ճար չիկա, կրնղվում ա, ասում ա. «Դե քյնա՝ կորի, էլ աչկիս ռեվաս վրեչ, էն ծիյանու թոլեն լ, քեզ ու քու քաչալին, քյացեք ընդի էլ տոնք ապրեցեք»։

Ախչիկը վրեր ա կենում, կյալիս ա քաչալի կուշտը, ասում ա. «Տըղա՛, ես քու պատճառովը իմ հորնմոր աչկիցը ընգյա. ինձ տուս են արել, ղրգյե, քու կուշտը։ Ո՞ւղում ես, վրեր ըսօրվանից ես քու կնիկը ըլեմ, տու՝ իմ մարթը»։ Տըղեն ասում ա. «Եթե ինձ անդամ կտընես, ես քու մարթը կըլեմ, տու իմ կնիկը»։ Ասում ա.— «Եթե եկել եմ քու կուշտը, ուրեմն պետկ ա քեզ էլ անդամ տընեմ»։

Սըհանք ըտի իրար հետ ապրում են։ Օրերի մի օր ուրուշ թաքավրեր ղորք ա հըվաքում կյալիս ա էս թաքավրերի վրա կռիվ։ Թաքավրերը կանչում ա էտ մինիստր փեսենունցը, ղորք ա տալըի, դենր ս տալըի ու ճամփա քցում, համա քաչալըին պանի տըեղ չի տընում։ Տըհանք քյնում են չքել բուգյու ղորքի կեսը կտորիլ են տալրի կյալի, կարում չեն մի պան անեն։ Էքսըն էլ քյնում տըհե ետ կյալի։ Քաչալը տրենում ա, վրեր թաքավրերի տըեղը նեղել են արթեն, նհանք ղոռ են անում։ Կնգյանը ասում ա. «Ա՛ կընիկ, բյնա քու հորը ասա, թող մի ծի էլ ինձ տա, ես էլ բյնամ կռիվ»։ Կընիկը բյնում ա հոր կուշտը, ասում ա. «Խի՞ չես մի ծի էլ իմ մարթին տալրի, նա էլ բյնա կռիվ»։ Թաքավրերը ասում ա. «Էն մինիստր փեսենին ղորքով ինչ կրացին անեն, վրեր քաչալտ ինչ դի անրիլ»։ Մըհել ասում ա. «Դե լավ էն մի ծին ա մնացել, էլ կավրեչ, բյնա ասա՝ էն էլ նրան տան, ղենքերն էլ ընդի կոխկին կըլի»։

Կյալիս ա վազիրին ասում ա, բյնում էն, տրենում են՝ ի՞նչ ծի. մի լղար, չոլախ ծի, անշախ-անշախ ժաժ ա կյալի, կոխկին էլ մի կոտրած, ժանգոտած թուր ու մի հին բարդանգա։

Քաչալը ծիյուն նստում ա, էտ ղենքերը վրեր ա ունում ու ճամփա ա ընգյնում, վրեր բյնում ա բաղը անց կենում, էտ ծին՝ ղենքերը վրեն կապած դեն ա անում ու ծոցիցը իրան ծիու մաղը հանում ա. կրցնում ա թըչէ՝ ծին ղենքով, թամքով կաղնում ա կողքին, իրան շորերը հաքնում ա, ղենքերը կապում ու դրբա կռվրի տեղն ա բըշում։ Ընգյնում ա էտ ղոշունի մեչը ու սկսում փրթիլը մըչև բուգյու տըհանց փըրթում ա. էտ օրը տըհանք մըխելի առաջ են բյնում։ Ըբուղյունը ծին թեքում ա բյնում բաղի քմակին շորերը հանում, կապում թամքիցը, մի մաղ ծիուցը պուկում, ծոցըմը տընում ու էն չոլախ ծիյուն նստում կյալի տուն։ Խաբարը հասնում ա թաքավրերին, թե սրհե-սրհե մի քաջ տղա ընգյել ա նրհանց դորքի մեչը. հենց փրթում ա, հենց ճարթում ա, վրեր էլ ասրիլու չի։

Էքսը թաքավրերը ասում ա. «Ես էլ եմ կյալի տրենամ»։ Տա բյնում ա ընդի, դուլբինը տընում աչկերին ու մի բութա տրեղ նըստում ա չորս զոլրի վրա մըտիկ անում։ Մըհել տրենում ա հրես իրան

քաչալ փեսեն չոլախ ծիյուն նստած եկավ մի պաշի քրմակի վեր եկավ ու մի քիչ կաղնեց, ինչ վրեր պաներ արավ՝ էտ չոլախ ծին տառավ մի վրեսկաճրած հրեղեն ծի, ինքն էլ մի էն ղայդի զենքեր կապրեց, շորեր հաքավ, վրեր սրհե մրտիկ անրիլով մարթ կշտանալ չի։ Ու քշեց քյնաց էտ ղոշունի մեչը սկսեց փրթիլը։

Թաքավրերը մնաց ըրմացած, գյդացավ, թե երազրմ ա, համա վրեր չորս ղոլը մրտիկ արավ տրեհավ, վրեր չէ, երազ չի, ըստի թաքավրերը ուրխացավ ու շատ թիթնացավ, վրեր տեհավ էտ իրան պուճուր փեսեն ա։ Նոր նա կրլխի ընգյավ, վրեր իրան պուճուր ախչիկը սխալ չի ըլել։

Մի խելախ կրովրիցը եդր, էն զորքը տրենմ ա, վրեր իրանց ղրբանը մի ծիյավրեր ա, ուրուշ օրմրի չիկա, ասրմ են՝ էս խի ենք սրհն շաղհրնցել, կալմեչ անրենք ու ղրրմա-ղրրմա փրթենք։ Տրհանր կամաց-կամաց մոտանրմ են ու տրան շրջապատրմ, վրեր սաղ փռնեն։ Նա ինչքան փրրթրմ ա, ըլրմ չի, տրհանք գյլիս շտանրմ են։ Տրենրմ ա վրեր չէ՝ իրան զոռ դեն անրիլ՝ վագրի ու Զմրուխ ղզի մազն ու բմբուլն էլ ա հանրմ կրցնրմ՝ տրհանք էլ են կյալի։ Վագրը մի ղոլիցն ա ընգյնրմ կլխերնուն՝ խեխտրմ, Զմրուխ ղուշն էլ մի ղոլրիցն ա վիրևիցը վրա թռչրմ, սրա նրա աչկերը հանրմ։

Սա թող ըստեղ փրթի, խաբարը տանք իրան ախպորիցը։ Մի օր էլ քաչալրի ախպերը մտիկ ա անրմ, տրենրմ ախպոր թուրը ժանգոտել ա, հորը ասրմ ա. «Հա՛յրիկ, ախպորս տրեղը նեղ ա, ես քյնրմ եմ նրա հաբեյին»։ Հերը ասրմ ա. «Ա՛ բալա, դե վրեր տրհե ա, կրքյնաս մրեր ծիյապահին կասրես, վրեր. «Իմ հերը ասրմ ա՝ իմաստուն ծին իրան զենքովը սարքովը տուս պի»։ Կրքյնաս էտ ծիյուն կրնստես, զենքերտ հազիր կրպահես ու կասես. «Դե՛, իմաստուն ծի ջան, գյդրմ ես, վրեր քյնալ դենք ախպորս հաբեյին հասնենք, էլ ուրուշ գործ չի ունենք, մրեր գործը տա յա»։ Կասրես ու ղնթրղեն բոշ կանես, ինքը քեզ տանրիլ դի թուշ ընդի»։

Պուճուր ախպերը սրհե էլ անրմ ա. մի սրհաթեն եդը սա էլ ա տուս կյալի էտ ղոշունրի մեչը։ Վրեր էրկու ախպերով տկսրմ են փրթիլը, էլ ղոշունը դրմանրմ չի, սկսրմ ա աչ ու ծախ փախչիլը. մրհել սրհանք տրենրմ են էլ օրմրի չի կա։ Մնացել են էրկուսով. նոր ըստի իրար ճտով են ընգյնրմ, պռոշտի անրմ, իրար հետ կյալիս են տուն։ Թաքավրերը ծին քշրմ ա կյալիս ա եդերնուն հասնրմ։ Համի սհանք էնքան իրար նման են, վրեր գյիդրմ

յ, թե վերն ա իրան փեսեն։ Մըշեր փեսեն ասում ա. «Թաքավորը ապրած կենա, էս էլ իմ ախպերն ա»։

Նոր ա ճընաչում իրան փեսին։ Թաքավորը էրկուսին էլ փըթաթվում ա, ճակատներուցը պաչում ա ու հիլ չի անում, վերը փեսեն քյանա էն ծիյու թովլեն։ Պիրում ա պալատը, մարթ ա ղրգյում պուճուր ըխչկա եղնեն՝ ախչիկը կյալիս ա ըտի թը չէ, վերը իրան մարթին տըհն զենքով զըրահով զինված, հաքած, կապած տըտենում ա՝ ուրախութենիցը էլ գյիդում չի, թե ինչ անըի. էլ մըտկիցը ընգյնում ա, թե հեր կա, մըեր կա, անծանոթ մարթըիք կան, ընգյնում ա մարթըի ճտովը պըչպըչսրում։ Մարթը ասում ա. «էս էլ իմ ախպերն ա»։ Ախպոր հետ էլա ծանոթանում։

Թաքավորը մեծ քյեփ ա սարքում, վաղիրին մի լավ սուրուն ախչիկ ա ըլում, էն էլ փեսի ախպորն են ուզում, թըզգան տըհանց փըսակում ա, հըրսանիք անում, ասում ա. «Տու կաց իմ տըեղը թաքավորեր»։

Տղեն ասում ա. «Թաքավորեր շան, շատ շնորհակալ եմ, ես հեր ունեմ, մըեր ունեմ, իմ ախպերը եկել ա եղնես, մըենք էլ ենք թաքավորերի տղա, ես իմ կընգյանը վերը ունեմ, քյանամ էքուց ռավրետ։

Տըղեն վերը ասում ա. «Մենք էլ ենք թաքավորերի տղա», թաքավորերը եքսան ա սրտըպընգում, ուրխանում։ Ախչիկը նոր ըստեղ հորը ասում ա. «Բա՜, հայրիկ ջան, վերը քեզ ասի՝ նրանից սավահի ես ուրրիշի ուզում չեմ, տու նեղանըիր, ախր ես էտ տըղին լրղանալիս տըեհել ի թաքուն ու սրիրտըս վրկա էր, վերը նա հասարակ տղա չի»։

Թաքավորը հրաման ա տալըի վաղիրներին, թե էսքան ուխտաղեոը էս, էսքանը՝ էս, էսքանը՝ էս կպատրաստեք ու էքուց ըռավրետ իմ փեսին իրան կընգյանը, իրան ախպորը կըտանենք իրանց տուն։

Ռավրետը էրկու հարիր ուղտ պեռնած քյարվան կապած էրկու հարիր ծիյավրերի հետ ճամփա ընգյան, էրկու ախպերերով իրանց կընանունցով ու եկան իրանց հոր կուշտը։ Ըստեղ հերը պիրում ա ուրախութենիցը՝ վերը տըղեն սաղ սալամաթ դավրիշիցը աղատվել, եկել ա, աղքատներին փող ա տալըի, ամրարնին պաց ա անում, ցորեն փայ անում ու քառասուն օր, քառասուն քշեր հրսանիք են անում, ուտում, խմում, քյեփ անում։

Նըհանք հասնում են իրանց մուրազին, տուք էլ հասնեք ծրեր մուրազին։